ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի օգոստոսի 27-ից 30-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման վերաբերյալ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Արմեն Սիմոնյան, Վարդուհի Չախալյան:

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ,

   Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության վարչության տեխնիկական քաղաքականության բաժնի առաջատար մասնագետ:

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2019թ. օգոստոսի 27-ից 30-ը:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցություն.

1. Տրանսպորտի և ենթակառուցվածքների Խորհրդատվական կոմիտեի 17-րդ նիստին:
2. ԵԱՏՄ անդամ-պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների փորձագետների Խորհրդատվական կոմիտեի նյութերը վերանայելու նիստ:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

1. Տրանսպորտի և ենթակառուցվածքների Խորհրդատվական կոմիտեի 16-րդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
2. ԵԱՏՄ անդամ-պետությունների Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և իրականացման փուլերի 2018-2020թթ. միջոցառումների ծրագրերի (ճանապարհային քարտեզի) կատարման ընթացքի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն:
3. ԵԱՏՄ անդամ-պետությունների Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և իրականացման փուլերի 2018-2020թթ.

ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:

4. «Նավագնացության մասին» Համաձայնագրի անդամ-պետությունների կողմից վավերացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Աշխատանքային խմբի կողմից.

- Քննարկվեցին 17-րդ Խորհրդատվական նիստի օրակարգի հարցերը և արձանագրային որոշումների խմբագրական ձևակերպումներ:
- Ընդհանուր առմամբ համաձայնեցվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի», «Ջրային տրանսպորտի» և «Երկաթուղային տրանսպորտի» բաժինները, իսկ «Օդային տրանսպորտի» բաժնում առկա են տարաձայնություններ, որոնք պահանջում են ևս մեկ անգամ քննարկել «Օդային տրանսպորտային ծառայությունների միասնական շուկայի ձևավորման գործում արդար և բարեխիղճ մրցակցության ապահովման համաձայնեցված մոտեցումների» Կոլեգիայի առաջարկությունների նախագիծ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումներ են կայացել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ղրղզստանի տրանսպորտի նախարարությունների համապատասխան ներկայացուցիչների հետ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Խորհրդատվական կոմիտեի անդամների կողմից մինչև ս.թ սեպտեմբերի 10 Հանձնաժողովին ներկայացնել դիրքորոշում Տրանսպորտի և ենթակառուցվածքների Խորհրդատվական կոմիտեի 17-րդ նիստի 3.1-3.4 և 3.10 հարցերի վերաբերյալ.
- Ս.թ սեպտեմբերի 16-ից 17-ը ևս մեկ անգամ անցկացնել խորհրդակցություն ղեկավարի տեղակալների մակարդակով՝ "ԵԱՏՄ անդամ-պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման համար պատասխանատու վարորդների և մասնագետների որակավորման և մասնագիտական պատրաստվածության պահանջների

ներդաշնակեցման համաձայնեցված մոտեցումների վերաբերյալ" ԵՏՀ Խորհրդի առաջարկության նախագծի քննարկման վերաբերյալ:

10. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.</u>

Արմեն Սիմոնյան

Վարդուհի Չախալյան

02.09.2019թ.